ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

<<Պար-ազգ>> խմբակի ծրագիր

2023-2024 ուստարի

Պարուսույց՝ Դավիթ Այվազյան

/շաբաթական `2 ժ. տարրական խումբ,

2 ժ. միջին խումբ

տարեկան՝ 136 ժ./

Բացատրագիր

Խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով:

Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անունը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում ներկայացված են պարեր, որոնք նախատեսված են համադպրոցական միջոցառումներ իրականացնելու, աշակերտների ընդհանուր զարգացման և գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, պարային, երաժշտական, և ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացման վրա:

Խմբակի ծրագիրը նախատեսված է տարրական և միջին դպրոցի տարիքային խմբի աշակերտների համար:

ԾՐԱԳԻՐ

Հայկական Հայրենասիրական 66 ժամ
Նպատակը
Ծանոթացնել աշակերտներին պարային այն շարժումների հետ, որոնք լցված են հայրենասիրական ոգով, կատարել բեմադրական աշխատանք և ստեղծել պարային կատարում:
Խնդիր
Հայրենասիրական պարերի օգնությամբ աշակերտների մոտ ավելի ամրացնել սերը հայրենիքի նկատմամբ:
Վերջնարդյունք
Աշակերտները մի քանի տարբեր պարերով կկարողանան արտահայտել իրենց հայրենասիրությունը:
1. <<ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ>> - 12 ժ. 2. <<ԿԻԼԻԿԻԱ>> - 12 ժ. 3. <<ՍԱՐԴԱՐԱՊԱՏ>> - 14 ժ. 4. <<ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՇԱՐԱՆ>> - 14 ժ. 5. <<ՊԱՅՔԱՐ>> - 14 ժ.
Հայկական բեմադրական պարեր 44 ժամ
Նպատակ
Ծանոթացնել աշակերտներին բեմադրական արվեստի հետ, տերմինաբանությանը, շարժումների միացման նրբություններին և մտքի արտահայտումը պարի միջոցով:
Խնդիր
Աշակերտները տեղեկացված կլինեն պարային շարժումների տերմիններին, կկարողանան ստեղծագործել ինքնուրույն և բեմադրական պարերով արտահայտել իրենց միտքը:
Վերջնարդյունք
Կներկայացնեն մի քանի բեմադրական պար, դրանց իմաստը և նշանակությունը:

1. <<ՕՏԱՐ ՃԱՆՓԵՔԻՆ>> - 16 ժ. 2. <<ԱՐՑԱԽ>> - 14 ժ. 3. <<ԾՈՎԻՑ ԾՈՎ>> - 14 ժ.
Մանկական պարեր 26ժամ
Նպատակ
Աշակերտների մոտ ստեղծել բարձր տրամադրություն, ազատ և էմոցիոնալ շարժումների արտահայտում:
Խնդիր
Կկարողանան իրենց ընկերությունը, ուրախությունը, զվարճանքը և մանկական խաղը ներկայացնել պարային շարժումներով և ներկայացնել հանդիսատեսին:
Վերջնարդյունք
Միջոցառումների ժամանակ կկարողանան ներկայացնել մի քանի մանկական պարեր
1. <<ՏԻԿՆԻԿՆԵՐ>> - 10 ժ. 2. <<ՏՈՒԿ-ՏՈՒԿ>> - 8 ժ. 3. <<ՆԱՆՈՒԼԻ ՊԱՐ>> - 8ժ.